

ԷԼԻԶԱ ՄԵԼԻՔԵԿՅԱՆ

ՍԻՐՈ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ
ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.172*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը քննում է XVIII դարի հայ բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովայի քնարերգության առանցքային թեման՝ սերը՝ բացահայտելով դրա բազմաշերտ դրսևորումները և փիլիսոփայական խորությունը: Վերլուծվում է սիրո թեման՝ որպես Սայաթ-Նովայի ողջ ստեղծագործական ժառանգության կենտրոնական առանցք, ինչպես նշել է Հովհաննես Թումանյանը՝ բնութագրելով նրան որպես «հոյակապ սիրահար» և «մշտական հուր հոգի»:

Աշխատանքում քննարկվում են սիրո տարբեր դրսևորումները՝ սկսած աշխարհիկ զգացմունքներից ու սիրած կնոջ մարմնական գեղեցկության նկարագրությունից («Անգին ակըն վըրէդ շարած», «Պատկիրքըդ՝ դալամով քաշած») մինչև աստվածային սիրո խորհրդաբանական մեկնաբանություններ և սուֆիական միստիցիզմի ազդեցություն («Դուն էն հուրին իս»): Վերլուծվում են առանցքային տաղեր, բացահայտվում է սիրո եռաստիճան ընկալումը (աշխարհիկ, հոգևոր, միստիկ միավորում) և գեղարվեստական համակարգի առանձնահատկությունները (համեմատություններ, փոխաբերություններ, խորհրդանիշներ՝ «Աշխարհը ծով, դու մեջը նավ»):

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև սիրո ողբերգական կողմին, մասնավորապես բանաստեղծի հնարավոր սիրավեպին արքայադուստր Աննա Բատոնիշվիլիի հետ, որն արտացոլվել է տառապանքի («Բաղըն բլբուլով լցվիլ է»), անհնարինության («Դուն մէ թաքավոր իս, յիս մէ խեղճ դերվիշ») և սիրո անդիմադրելի ուժի («Շատ սիրուն իս») մոտիվներում:

Բանալի բառեր և արտահայտություններ. Սայաթ-Նովա, սեր, քնարերգություն, աշուղ, տաղ, սիրո փիլիսոփայություն, գեղարվեստական միջոցներ, Աննա Բապունիշվիլի, սուֆիզմ, հայ գրականություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքը նվիրված է Սայաթ-Նովայի քնարերգության կենտրոնական թեմայի՝ սիրո բազմաշերտ և բազմակողմանի դրսևորումների վերլուծությանը: Քննության առարկա կդառնա, թե ինչպես է աշուղի երգերում սերը ներկայանում իր տարբեր մակարդակներում՝ սկսած սիրած էակի մարմնական գեղեցկության հիացական նկարագրություններից («Անգին ակըն վըրէդ շարած», «Պատկիրքըդ՝ դալամով քաշած») մինչև սիրո փիլիսոփայական և անգամ միստիկական ընկալումները («Դուն էն հուրին իս»):

Կանդրադառնանք սիրո՝ որպես տառապանքի, անհասանելիության ցավի («Բաղըն բլբուլով լցվիլ է»), բայց միևնույն ժամանակ՝ կյանքի ուժի և հոգևոր կատարելագործման ուղու («Էշխըն հէ՛ստի կըրակ ունի») պատկերմանը: Կփորձենք բացահայտել արևելյան պոեզիայի, մասնավորապես՝ սուֆիական միստիցիզմի ազդեցությունը Սայաթ-Նովայի սիրային փիլիսոփայության վրա, ինչպես նաև կքննարկենք նրա սիրերգության հնարավոր կենսագրական հիմքերը՝ ցույց տալով, թե ինչպես է աշուղը կարողացել համադրել աշխարհիկ ու հոգևորը՝ ստեղծելով սիրո մի համապարփակ և մշտապես արդիական հայեցակարգ:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել Սայաթ-Նովայի քնարերգության մեջ սիրո փիլիսոփայության բազմաշերտությունը, դրա կապը ժամանակի մշակութային-փիլիսոփայական հոսանքների հետ և գեղարվեստական մարմնավորման յուրահատկությունները:

Առաջադիր նպատակին հասնելու համար լուծվում են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել Սայաթ-Նովայի տաղերում սիրո փիլիսոփայության դրսևորման տարբեր մակարդակները (աշխարհիկ, հոգևոր, միստիկ):

- Բացահայտել սիրո հայեցակարգի կապը արևելյան պոեզիայի, սուֆիական միստիցիզմի և հայկական քնարերգության ավանդույթների հետ:

- Ուսումնասիրել սիրո փիլիսոփայության գեղարվեստական արտահայտման միջոցները (պատկերներ, համեմատություններ, խորհրդանիշներ):

- Քննարկել Սայաթ-Նովայի սիրային քնարերգության հնարավոր կենսագրական հիմքերը և դրանց ազդեցությունը ստեղծագործության վրա:

- Որոշել Սայաթ-Նովայի սիրո փիլիսոփայության տեղը XVIII դարի հայ գրական-փիլիսոփայական մտքի համատեքստում և դրա արդիականությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ մեթոդաբանական սկզբունքներով՝

- Տեքստային-բանասիրական վերլուծություն՝ Սայաթ-Նովայի տաղերի գեղարվեստական և իմաստային շերտերը բացահայտելու համար:

- Պատմական-համեմատական մեթոդ՝ բանաստեղծի ստեղծագործությունը ժամանակի գրական-մշակութային համատեքստում դիտարկելու համար:

- Հերմենևտիկական մոտեցում՝ ստեղծագործությունների փիլիսոփայական-գեղագիտական իմաստների մեկնաբանման համար:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խաղով եկավ,

Ախով գնաց Սայաթ-Նովան:

Երգով եկավ,

Վերքով գնաց Սայաթ-Նովան:

Սիրով եկավ,

Սրով գնաց Սայաթ-Նովան:

Սիրով մնաց Սայաթ-Նովան (**Թումանյան Հ., 1988**):

Հ. Թումանյանի այս խորհմաստ տողերը դիպուկ բնորոշում են 18-րդ դարի մեծ աշուղի կյանքի ու ստեղծագործության էությունը, որի առանցքում անշեջ բոցի պես վառվում է սերը: Ինչպես նշել է մեծն Թումանյանը, Սայաթ-Նովան «հոյակապ սիրահար է», որի պոեզիան «մոդա չէ, որ ձանձրացնի ու փոխվի», այլ «մշտական հուր հոգի» է, որ շարունակում է հուզել և ոգեշնչել:

«...Մեր վիթխարի Սայաթ-Նովան մի հոյակապ սիրահար է, բռնված ու բռնկված սիրո հրդեհով, նրա լույսի տակ էլ նկատում է աշխարհքն ու իրերը, զգում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ, որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը»:

«Սայաթ-Նովան մոդա չէ, որ ձանձրացնի ու փոխվի... Գեղեցիկ ձևի մեջ մի մշտական հուր հոգի է նա, մի ազնիվ ու լիքը սիրտ, մի հարազատ հզոր շունչ, որ մեր աշխարհի հարազատ շնչի նման խաղալու է Կովկասի ժողովուրդների վրա...», – գրել է Հովհաննես Թումանյանը (**Թումանյան Հ., 1913**):

Սայաթ-Նովայի քնարերգության մեջ սիրո թեման կենտրոնական առանցք է, որի շուրջ ծավալվում է բանաստեղծի ողջ ստեղծագործական ժառանգությունը: Նրա երգերում սերը դրսևորվում է բազմաշերտ ու բազմակողմանի՝ սկսած աշխարհիկ զգացմունքներից մինչև աստվածային սիրո խորհրդաբանական մեկնաբանությունները:

Սայաթ-Նովայի սիրերգության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում սիրած կնոջ մարմնական գեղեցկության նկարագրությունը: Բանաստեղծը նրբորեն ներկայացնում է սիրելիի արտաքին հմայքը՝ օգտագործելով արևելյան պոեզիային բնորոշ համեմատություններ ու փոխաբերություններ: Սակայն ֆիզիկական գեղեցկության նկարագրությունը երբեք ինքնանպատակ չէ. այն ծառայում է հոգևոր սիրո արտահայտմանը:

«Անգին ակըն վըրէդ շարած» տաղում բանաստեղծը սիրելիի գեղեցկությունը համեմատում է թանկարժեք քարերի հետ, սակայն այդ համեմատությունների միջոցով բացահայտում է նրա հոգևոր արժեքը:

Սկանդարի-Ջուլդարի թողած ջավահիր իս, անգին լալ իս.

Նմանատիպ մոտեցում կարելի է տեսնել նաև «Դուն էն հուրին իս» երգում, որտեղ արտաքին գեղեցկությունը դառնում է ներքին հոգևոր գեղեցկության արտացոլանք:

Դուն էն հուրին իս, վուր **գէմի կու զաւթէ,**
 Չունքի ինձ զաւթեցիր խափով, նազա՛նի,
Արիվիլք, արիվմուտ, հարաւ ու հիւսիս
 Չըկայ քիզի նըման չափով, նազա՛նի:

Շատ մարդ **քու էշխէմէն** կու դառնայ յիզիդ,
 Արի մէ ռա՛հմ արա, լա՛ւ կացի միզիդ,
 Գ՛ուզիմ, թէ **համաշա դամ անիմ քիզիդ՝**
 Սանթուրով, քամանչով, դափով, նազա՛նի:

Դարդիրըս շատացաւ՝ ասիլ իմ ուզում.
 Աչքէմէս արտասունք հուսիլ իմ ուզում.
 Համաշա, եա~ր, քիզիդ խօսիլ իմ ուզում,

Սիրտըս չէ կըշտանում գափով, նազա՛նի (**Սայաթ-Նովա, 1959**):

Բանաստեղծության փիլիսոփայական շերտերում առանցքային է սիրո եռաստիճան ընկալումը:

- Առաջին մակարդակում սերը ներկայանում է որպես աշխարհիկ զգացմունք՝ արտահայտված «գէմի կու զաւթէ» տողով:
- Երկրորդ մակարդակում այն վերածվում է հոգևոր փորձառության՝ «քու էշխէմէն» արտահայտությամբ:
- Երրորդ՝ բարձրագույն մակարդակում սերն արդեն դառնում է միաստիկ միավորման ձգտում՝ «համաշա դամ անիմ քիզիդ»:

Սուֆիական միաստիցիզմի ազդեցությունն արտահայտվում է մի քանի հիմնական մոտիվներով: «Հուրի» կերպարը խորհրդանշում է աստվածային գեղեցկությունը, իսկ տառապանքի թեման («դարդիրըս շատացաւ»)

ներկայացնում է հոգևոր կատարելագործման ուղին: Մահվան մոտիվը («ղաքույ ունիմ՝ քու խաթրու ինձ սըպանին») դառնում է սիրո բարձրագույն արտահայտություն:

Բանաստեղծության գեղարվեստական համակարգում կարևորվում են աշխարհագրական խորհրդանիշները («Արիվիլք, արիվմուտ, հարաւ ու հիւսիս»), որոնք ընդգծում են սիրո համընդգրկուն բնույթը: Երաժշտական գործիքների հիշատակումը («Սանթուրով, քամանչով, դափով») ստեղծում է սիրո բազմաձայն համանվագ:

XVIII դարի համատեքստում Սայաթ-Նովայի սիրո փիլիսոփայությունն առանձնանում է ընդհանուր արևելյան և հայկական ավանդույթների յուրօրինակ համադրությամբ: Նա կարողանում է ներդաշնակորեն միավորել աշխարհիկ և հոգևոր սերը՝ ստեղծելով սիրո համընդհանուր փիլիսոփայական հայեցակարգ:

Տաղերգուի նրբանկատ տաղերից յուրաքանչյուրը նկարագրական տողերի մի գունագեղ առանցք է պարունակում, ինչպես «Պատկիրքըդ՝ ղալամով քաշած» տաղում վարպետորեն նկարագրում է գեղեցիկ կնոջ կերպարը՝ օգտագործելով հարուստ պատկերավոր միջոցներ և արևելյան պոեզիային բնորոշ համեմատություններ:

Բանաստեղծությունը կառուցված է հինգ քառատողերից, որտեղ յուրաքանչյուր տուն ավարտվում է «...իս անում» կրկներգով: Հեղինակը կիրառում է բազմաթիվ գեղարվեստական արտահայտչամիջոցներ՝ փոխաբերություններ, համեմատություններ և այլաբանություններ:

Առաջին քառատողում բանաստեղծը պատկերում է սիրելիի արտաքին գեղեցկությունը՝ համեմատելով նրան վրձնանկարի հետ: Երկրորդ տան մեջ կինը համեմատվում է նորալուսնի հետ, իսկ նրա մազերը նկարագրվում են որպես բնական գեղեցկության խորհրդանիշ:

Երրորդ և չորրորդ քառատողերում Սայաթ-Նովան անդրադառնում է կնոջ հմայքին՝ օգտագործելով երաժշտական գործիքների (սանթուր, քամանչա, չոնգուր, չանգ) և բնության (վարդ, մանուշակ) պատկերներ:

Պատկիրքը ղալամով քաշած- այստեղ սիրելի գեղեցկությունը համեմատվում է նկարչի վրձնով արված գեղանկարի հետ, ընդգծելով նրա արտաքինի կատարելությունը:

Բացվիլ իս կարմիր վարթի պես - սիրելին համեմատվում է նոր բացված վարդի հետ, որը խորհրդանշում է թարմություն, գեղեցկություն և կենսունակություն:

Էրեսըտ նոր լուսնի նըման - դեմքի գեղեցկությունը համեմատվում է նորալուսնի հետ, որը արևելյան պոեզիայում գեղեցկության դասական սիմվոլ է:

Յիփ տիղեմետ ժաժ իս գալի, շըխշըխկում իս ջիղջիղի պես - շարժումների նրբությունն ու կենդանությունը համեմատվում է արծաթե բարակ թիթեղի հետ:

Նովափար, ծաղիկ ծովային - սիրելին համեմատվում է ջրաշուշանի հետ, որը խորհրդանշում է մաքրություն և նրբություն:

Աամենախորը համեմատություններից մեկն է «Աշխարքըն ծով, դուն մեջը նավ»-ը, որտեղ սիրելին պատկերվում է որպես նավ կյանքի ծովում, ինչը ցույց է տալիս նրա յուրահատուկ և առանձնահատուկ լինելը:

Աշխարիը համեմատվում է անծայր ծովի հետ՝ ընդգծելով նրա անսահմանությունն ու անկանխատեսելիությունը: Սիրելին պատկերվում է որպես նավ, որը շարժվում է այդ ծովում՝ առանձնանալով և գրավելով շրջապատի ուշադրությունը:

Առավել խոր ըմբռնմամբ՝ ծովը խորհրդանշում է կյանքի դժվարությունները, փորձությունները, վտանգները, նավը դառնում է ապաստանի, հույսի և փրկության խորհրդանիշ, իսկ սիրելին իր «էլքան» մազերով (մազիրըտ էլքան իս շինի) դիտվում է որպես կյանքի փոթորիկների միջով անցնելու ուղեցույց:

Այս համեմատությունները ոչ միայն բացահայտում են սիրելիի արտաքին գեղեցկությունը, այլև նրա ներքին հմայքը և ազդեցությունը շրջապատի վրա, քանի որ վերջիններս միավորում են և՛ տեսողական պատկերը, և՛ փիլիսոփայական իմաստը, և՛ հուզական բովանդակությունը:

Ընդհանուր առմամբ՝ այս ստեղծագործությունը Սայաթ-Նովայի սիրային քնարերգության փայլուն նմուշներից է, որտեղ միահյուսված են արևելյան պոեզիայի ավանդույթները և հեղինակի անհատական ոճը:

Սիրո հանդեպ անվստահությունն էր, որ խանգարեց հասնել արքայաքրոջը, որը և համալրվեց գերության, ծաղրի, վտարման ցավով, երբ իր երկամյա սերը՝ Աննա Բատոնիշվիլին, 22 տարեկան հասակում ամուսնացավ Դիմետրե Օրբելիանիի (Ղափլանիշվիլի) հետ:

Բաղըն բլբուլով լցվիլ է, վարթ-գուլգազը չէ պակասում.

Բացվիլ ին զառ ծաղկընիրը, սիրուն նազը չէ պակասում.

Յասամաններն էլ ին ուրախ, լավ էրազը չէ պակասում.

Շամիրը շամդանում վառած, զիրանդազը չէ պակասում.

Սարքին, լիքը մեյդանումըն քանդիրբազը չէ պակասում:

...

Էսենց հարսնիք, նշանդրիք Շահն էլ չարեց Զալի համա.

Ինչ վուր արից սա իր հալալ աղջկա-գոզալի համա.

Էս ինչ գլխոքըս անց կացավ, վուղչն իմ տարքոտ հալի համա.

Քամանչայի, նայի համա, դավուլի, դավալի համա.

Չուրս բոլորքըտ խաղ ին ասում, սանթուր-սազը չէ պակասում

(Սայաթ-Նովա, (1959):

Ակնհայտ է, որ 4-րդ տունն ակնարկում է արքայադուստր Աննայի հարսանիքը, որին ինքը՝ երգիչն էլ է մասնակից եղել սազանդարի կարգավիճակով: Մի իրավիճակ է սա, որ հետագայում Իսահակյանի քնարերգության մեջ պիտի արտահայտվեր «Ներկա եղա սիրեկանիս պսակին» տողով: Իսկ սա ուղղակի հերքումն է այն տեսակետի, թե Սայաթ-Նովան անձնական և ուղղակի սեր չի ունեցել:

Պարզ է դառնում, որ այս սերը ողբերգական էր, քանի որ դասակարգային տարբերությունը թույլ չէր տալիս նրանց միասին լինել (Դուն մէ թաքավուր իս, յիս մէ խեղճ դերվիշ):

Նա իր սիրո զգացմունքները փոխանցում էր նուրբ պոետիկ պատկերների միջոցով՝ համեմատելով Աննային վարդի, սոխակի և այլ գեղեցիկ բնական երևույթների հետ:

Այս անհնարին սերը խոր հետք է թողել Սայաթ-Նովայի ստեղծագործության վրա: Նրա երգերում արտացոլված են և՛ սիրո բերկրանքը, և՛ անհասանելի սիրո ցավը:

«Բասլանուփտուր էշխ բախչասին» տաղում, նա կարծես ինքն իրեն համոզում է մոռանալ իր սերը, և կոչ է անում արքայաքրոջը, ամուսնացած լինելով հանդերձ, իրեն զուր հույսեր չտալ:

Հալա դիվանա ջոշխունամ էշխ օխուա թեզ աթմա,

Գորանդա ռանգում դաղըլուր, ագնո[ւ]ն բաշուն բեզաթմա,

Յա՛ր, բելուն մարալա բենզզար, դաթ-դամաթուն ուզաթմա,

Քոլգասին ալամի տուֆմիշ, սալբ ու չինար բունդադուր (**Սայաթ-Նովա, 1959**):

Թարգմանությունը.

Ես դեռ մի ջահել խենթուկ եմ, սիրուդ նետը մի՛ արձակի,

Քեզ տեսնելուց դողդոջում եմ, էլ գլուխդ դու մի զուքի,

Մարմինդ եղնիկի պես է, մեջքդ իզուր էլ մի ձգի,

Շողքը աշխարհը ծածկել է, նոճի, չինարը ա՛յստեղ է:

Բազմիցս մեկնաբանված և տարատեսակ մոտեցումներով քննված է աշուղի «Թամամ աշխար պըտուտ էկա» խաղը, որում հիմնական մոտիվը սիրելիի բացառիկության և անփոխարինելիության գաղափարն է: Սայաթ-Նովան սկսում է համաշխարհային համեմատությամբ՝ «թամամ աշխար պտուտ էկա», հաստատելով, որ ամբողջ աշխարհում չկա նման գեղեցկություն: Նա կիրառում է արևելյան պոեզիային բնորոշ թանկարժեք իրերի և քարերի համեմատություններ՝ ջավահիր, ջուհարդար, օսկե փիալա, օսկե քամար:

Հատկանշական է, որ պատկերվում են սիրելիի և՛ արտաքին, և՛ ներքին գեղեցկությունը: Արտաքինի նկարագրության մեջ առանձնանում են աչքերի (օսկե փիալա), դեմքի (շամս ու դամար), մեջքի (օսկե քամար) համեմատությունները:

Իսկ կերպարի շարժունությունն արտահայտվում է «թուփի դուշ» և «ռաշ» համեմատություններով՝ ցույց տալով սիրելիի կերպարի բազմակողմանիությունը:

Վերջնամասում բանաստեղծը խոստովանում է իր սիրո ուժը՝ օգտագործելով կրակի խորհրդանիշը (դուն կրակ, հաքածըդ կրակ):

Ստեղծագործության մեջ զգացմունքային խորությունը միահյուսված է գեղարվեստական պատկերների հարստության հետ, ինչը բնորոշ է Սայաթ-Նովայի պոեզիային: Խաղը ցույց է տալիս հեղինակի վարպետությունը՝ համադրելու արևելյան պոետիկայի ավանդույթները հայկական սիրային քնարերգության հետ:

Սիրո ուժի դրսևորման մեկ այլ խաղում Սայաթ-Նովան նկարագրում է սիրո զգացմունքի հզորությունն ու անդիմադրելի ուժը.

Շատ սիրուն իս, շախաթայի ասողին խար չիս անի.

Անջաղ գըցիս էշխի մէջըն, հիդ կ'էհաս՝ քար չիս անի:

Էշխըն հէ՛ստի կըրակ ունի՝ վո՛ւնց կու էրվի, վո՛ւնց կ'երթայ.

Թէգուզ նընգնիմ ծովի մէջըն՝ հովնալու ճար չիս անի:

Բաս աշուղըն վո՛ւնց դիմանայ էդ քու տըված կէժակուն.

Դուն ինքնակալ թագաւոր իս՝ բէհուբազար չիս անի:

Թէ՛վուր սարիրուն հանդիբիս, կու հալիս մումի նըման.

Թէ՛վուր քաղաք տիղ հանդիբիս, կու քանդիս՝ վար չիս անի:

Իսկի բէհուբազար չունի **շախաթայի չասողըն.**

Է՛նդու համա, Սա՛յաթ-Նովա, շատ էյթիբար չիս անի (**Սայաթ-Նովա, 1959**):

«Էշխի մէջըն» (սիրո մեջ) ընկնելը կրկին համեմատվում է կրակի հետ, որին հնարավոր չէ դիմանալ՝ հիմնավորելով, որ նույնիսկ ծովը չի կարող հովացնել այդ կրակը (Թէգուզ նընգնիմ ծովի մէջըն):

Սիրեցյալը ներկայացվում է որպես «ինքնակալ թագավոր», որը ցույց է տալիս նրա բացարձակ իշխանությունը սիրահարի սրտի վրա:

Թավ գունանշմամբ տողերի միջոցով սիրո ուժը պատկերվում է բնական երևույթների միջոցով՝ միասին ստեղծելով սիրելիի ամենագոր կերպար, ով կարող է հաղթահարել և՛ բնական, և՛ մարդկային արգելքները, ունի և՛ նուրբ, և՛ հզոր ազդեցության ուժ և, իհարկե, անդիմադրելի է բոլոր հանգամանքներում:

Վերջին տողերում հեղինակը խոսում է աշուղի դերի մասին, ով պարտավոր է երգել սիրո մասին՝ չնայած դրա դժվարություններին:

Բանաստեղծությունը ցույց է տալիս սիրո երկակի բնույթը՝ միաժամանակ տանջալից և կենսատու. Սայաթ-Նովան վարպետորեն օգտագործում է հակադրությունները՝ ստեղծելով սիրո բազմաշերտ պատկեր:

Մինչ օրս շարունակ քննելի տեսակետ է մնում Աննա Բատոնիշվիլիի և Սայաթ-Նովայի սերը: Վերը շարադրվածը հիմքն է այն մտքի, որ աշուղի ստեղծագործություններում սիրո զգացմունքը դրսևորվում է տարբեր մակարդակներում:

Սայաթ Նովան արտահայտել է մարդկային սիրո թե՛ գեղեցկությունը, թե՛ տառապանքը: Սիրո այս տեսակը բնութագրվում է՝ ֆիզիկական գեղեցկության հանդեպ հիացմունքով, կարոտի և բաժանման ցավով, միավորման ձգտումով և այլն:

Ավելի բարձր մակարդակում սերը վերածվում է հոգևոր փորձառության՝ դառնալով ինքնաճանաչման, ներքին վերափոխման և կատարելության ձգտելու միջոց:

Սիրո նրա ըմբռնումը դուրս է գալիս զուտ զգացմունքային մակարդակից՝ վերածվելով կյանքի իմաստավորման և հոգևոր կատարելագործման ուղու: Այս փիլիսոփայությունը մնում է արդիական՝ օգնելով ժամանակակից մարդուն հասկանալու սիրո բազմաշերտ էության խորքերն ու ծալքերը:

Սայաթ Նովայի սիրո փիլիսոփայությունը պահպանում է իր արդիականությունը, քանի որ անդրադառնում է համամարդկային արժեքներին,

քննում է մարդկային հոգու հավերժական որոնումները և ցույց է տալիս սիրո ձևափոխիչ ուժը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սայաթ-Նովան իր ստեղծագործություններով սիրո գաղափարը չի սահմանափակում միայն սիրային կապով, այլ ներկայացնում է այն որպես մարդկային գոյության բովանդակային մաս՝ կապված ներքին պայքարի, մարդկային բնության և կրքերի հետ: Նրա տաղերը հարուստ են սիրո խառնածին, անծայրածիր ձգտումներով, որոնք գերազանցում են իդեալականության սահմանները ու դառնում կյանքի էական մասը:

Սայաթ-Նովայի սիրո պատկերացումը հնչում է որպես կյանքի և մահվան, ցավի և երջանկության, կորստի և ձեռքբերման հակասությունների խաչմերուկ: Սերը նրա ստեղծագործություններում հաճախ պատկերացվում է որպես գաղափար, որը վերածվում է հոգևոր փառքի ու անձնական փրկության, բայց միևնույն ժամանակ այն պարունակում է ցավ ու տառապանք: Բանաստեղծը շատ հաճախ գրականության մեջ իր սիրո պատկերները համադրում է փիլիսոփայական խոր մտածումների հետ՝ մտահոգվելով սիրո անորոշության, դրա խորքերն ու սահմաններն ուսումնասիրելով:

Իր ստեղծագործության մեջ նա կարդացողին ներկայացնում է նաև սիրո խիստ դժվարին կողմերը՝ նրա հակասությունները, ցավը, ստացումը ու կորուստը, ինչը դարձնում է Սայաթ-Նովայի աշխատությունները ոչ միայն գեղարվեստական, այլև փիլիսոփայական ու հոգևոր խորք ունեցող: Հետևաբար, Սայաթ-Նովան սիրո մասին մտածողության մեջ ստեղծում է յուրահատուկ հայեցակարգ՝ սիրո և դրա արտահայտությունների տեսանկյունից, որը մարդկության հոգևոր ժառանգության մի մասն է դարձել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղբալյան Ն. (1966), Սայաթ-Նովայի հետ, Երկեր, հատ. 2, Պեյրուֆ, Մատենաշար «Համագգային», 158 էջ:

2. **Բախչինյան Հ. (1977)**, Սայաթ-Նովայի կենսագրության երկու հարցի շուրջ, Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի», № 2 (32), էջ 162-175:
3. **Բախչինյան Հ. (1987)**, Խաղերի ժողովածու. Սայաթ-Նովա, Երևան «Սովետական գրող» հրատ.:
4. **Բախչինյան Հ. (2010)**, Սայաթ-Նովա. Կյանքը և գործը, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
5. **Դովսետ, Չարլզ Ջ. Ֆ. (1997)**, Սայաթ-Նովա. 18-րդ դարի աշուղ, Կենսագրական և գրականագիտական ուսումնասիրություն. Corpus Scriptorum Christianorum Orientalium մատենաշար. 561, Subsidia ենթաշարք. 91, Լուվեն, Peeters հրատ., https://archive.org/stream/dowsett-1997-sayat-nova/Dowsett_1997_Sayat-Nova_djvu.txt:
6. **Զարգարյան Վ. (2009)**, Բառ ու բանք Սայաթ-Նովայի, Թեհրան, «Նաիրի» հրատ.:
7. **Թումանյան Հ. (1973)**, Սայաթ-Նովայի երգերի բնավորությունը, Երևան, «Հորիզոն», մայիսի 25, № 113:
8. **Հասրաթյան Մ. (1963)**, Սայաթ-Նովայի դավթարը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., № 10, էջ 3-32:
9. **Հասրաթյան Մ. (2008)**, Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Միջիգանի համալսարան, Երևան, Հայպետհրատ:
10. **Ղազարյան Ս. (2012)**, Պարույր Սևակի «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» անավարտ աշխատությունը, Բանբեր Երևանի համալսարանի, № 136.1, էջ 9-22:
11. **Նալբանդյան Գ. (1976)**, Սայաթ-Նովայի ծածկագիր տաղերի վերծանման շուրջը, Բանբեր Երևանի համալսարանի, № 2 (29), Երևան, էջ 158-166:
12. **Սայաթ-Նովա (1959)**, Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն տաղերի ժողովածու, Երևան, Հայպետհրատ:
13. **Սայաթ-Նովա (1987)**, Խաղեր, Երևան, ԵՊՀ հրատ.:
14. **Սևակ Պ. (1987)**, Սայաթ-Նովա, Երևան, «Սովետական գրող» հրատ.:

15. **Ստեփանյան Ի., Գևորգյան Ն., Պապայան Ռ. (2006)**, Սայաթ-Նովա. Հայերեն թուրքերեն խաղեր, Երևան, Հեղինակային հրատ.:
16. **Օհանյան Ա. (1963)**, Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը, Ս. Էջմիածին, Հայրապետական արժույթի Ս. Էջմիածնի հր., հատ. Ի, № Թ-Ժ, 82 էջ:

REFERENCES

1. **Aghbalyan N. (1966)**, Sayat'-Novayi het /With Sayat-Nova/, Erker, Vol. 2, Beirut, "Hamazgayin" Press.
2. **Bakhchinyan H. (1977)**, Sayat'-Novayi kensagrowt'yan erkow harci showrj /On Two Questions of Sayat-Nova's Biography/, "Banber Yerevani Hamalsarani", No. 2 (32), Yerevan, pp. 162-175.
3. **Bakhchinyan H. (1987)**, Xagheri jhoghovac'ow. Sayat'-Nova /Collection of Songs: Sayat-Nova/, Yerevan, "Sovetakan grogh" Publishing House.
4. **Bakhchinyan H. (2010)**, Sayat'-Nova. Kyanqy' ev gorc'y' /Sayat-Nova: Life and Work/, Yer Sayat'-Nova. 18-rd dari ashowgh, Kensagrakan & grakanagitakan owsowmnasirowt'yown an, Armenian SSR Academy of Sciences Press.
5. **Dowsett, Charles J. F. (1997)**, Sayat'-Nova. 18-rd dari ashowgh, Kensagrakan ev grakanagitakan owsowmnasirowt'yown /Sayat-Nova: An 18th-century Troubadour. A Biographical and Literary Study/. Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 561, Subsidia, tomus 91. Leuven: Peeters Publishers, 300 p. https://archive.org/stream/dowsett-1997-sayat-nova/Dowsett_1997_Sayat-Nova_djvu.txt
6. **Zargaryan V. (2009)**, Bar' ow banq Sayat'-Novayi /Word and Discourse of Sayat-Nova/, Tehran, "Nairi" Publishing House.
7. **Tumanyan H. (1973)**, Sayat'-Novayi ergeri bnavorowt'yowny' /The Character of Sayat-Nova's Songs/, "Horizon" (newspaper), May 25, No. 113, Yerevan.

8. **Hasratyan M. (1963)**, Sayat'-Novayi davt'ary' /Sayat-Nova's Davtar (Notebook)/, Herald of the Academy of Sciences of the Armenian SSR, No. 10, pp. 3-32.
9. **Hasratyan M. (2008)**, Hayeren, vraceren ev adrbejaneren xagheri jhoghovac'ow /Collection of Armenian, Georgian, and Azerbaijani Songs/, Digitized by the University of Michigan, Yerevan, Haypethrat.
10. **Ghazaryan S. (2012)**, Parowyr Sevaki «Sayat'-Novan & hay mijnadary'» anavart ashxatowt'yowny' /Paruyr Sevak's Unfinished Work 'Sayat-Nova and the Armenian Middle Ages/, “Banber Yerevani Hamalsarani”, 136.1, pp. 9-22.
11. **Nalbandyan G. (1976)**, Sayat'-Novayi c'ac'kagir tagheri verc'anman showrjy' /On the Deciphering of Sayat-Nova's Coded Songs/, “Banber Yerevani Hamalsarani”, No. 2 (29), Yerevan, pp. 158-166.
12. **Sayat-Nova (1959)**, Hayeren, vraceren & adrbejaneren tagheri jhoghovac'ow /Collection of Armenian, Georgian, and Azerbaijani Songs/, Yerevan, Haypethrat.
13. **Sayat-Nova (1987)**, Xagher /Songs/, Yerevan, Yerevan State University Publishing House.
14. **Sevak P. (1987)**, Sayat'-Nova /Sayat-Nova/, Yerevan, "Sovetakan grogh" Publishing House.
15. **Stepanyan I., Gevorgyan N. & Papayan R. (2006)**. Sayat'-Nova. Hayeren t'owrqeren xagher /Sayat-Nova, Armenian-Turkish Songs/, Yerevan, Author's Edition.
16. **Ohanyan A. (1963)**, Sayat'-Novayi c'nndyan 250-amyaky' /The 250th Anniversary of Sayat-Nova's Birth/, Etchmiadzin (Official journal of the Holy See of St. Etchmiadzin), Vol. 20, No. 9-10, 82 p.

Elichka Melikbekyan

The philosophy of love in Sayat Nova's lyrics**Conclusion**

Keywords and Phrases: *Sayat-Nova, love, lyric poetry, ashugh, tagh (poem/song), philosophy of love, artistic devices, Anna Batonishvili, Sufism, 18th century, Armenian literature.*

This work examines the central theme of the lyric poetry of the 18th-century Armenian poet-ashugh Sayat-Nova – love – revealing its multifaceted manifestations and philosophical depth. The theme of love is analyzed as the central axis of Sayat-Nova's entire creative heritage, as noted by Hovhannes Tumanyan, who characterized him as a "magnificent lover" and an "eternal fiery soul."

The study discusses various manifestations of love, ranging from worldly emotions and descriptions of the beloved woman's physical beauty ("Angin akn vret sharats" / "Precious Gem Strung on You," "Patkirkd ghalamov kashats" / "Your Image Drawn with a Pen") to mystical interpretations of divine love and the influence of Sufi mysticism ("Dun en hurin is" / "You Are That Houri"). Key taghs (poems/songs) are analyzed, revealing the three-stage perception of love (worldly, spiritual, mystical union) and the features of the artistic system (comparisons, metaphors, symbols – e.g., "Ashkharhə tsov, du mejə nav" / "The World is a Sea, You are a Ship Within It").

Special attention is also paid to the tragic aspect of love, particularly the poet's possible romance with Princess Anna Batonishvili, which is reflected in motifs of suffering ("Baghn blbulov Itsvil e" / "The Garden is Filled with Nightingales"), impossibility ("Dun me takavor is, yis me kheghch dervish" / "You are a King, I am a Poor Dervish"), and the irresistible power of love ("Shat sirun is" / "You Are Very Beautiful").

Эличка Меликбекян

Философия любви в лирике Саят-Новы

Заключение

Ключевые слова и выражения: Саят-Нова, любовь, лирика, ашуг, таг (песня), философия любви, художественные средства, Анна Батонишвили, суфизм, армянская литература.

В данной работе исследуется ключевая тема лирики армянского поэта-ашуга XVIII века Саят-Новы – любовь, раскрывая её многогранные проявления и философскую глубину. Анализируется тема любви как центральная ось всего творческого наследия Саят-Новы, как отметил Ованес Туманян, охарактеризовав его как «великолепного влюбленного» и «вечную пламенную душу».

В работе обсуждаются различные проявления любви: начиная от мирских чувств и описания телесной красоты возлюбленной («Ангин акн вред шарац» / «Бесценный камень на тебе нанизан», «Паткиркт каламов кашац» / «Образ твой пером начертан») до мистических толкований божественной любви и влияния суфийского мистицизма («Дун эн урин ис» / «Ты та гурия»). Анализируются ключевые таги (песни), раскрывается трехступенчатое восприятие любви (мирское, духовное, мистическое единение) и особенности художественной системы (сравнения, метафоры, символы – например, «Ашхарэ цов, ду мече нав» / «Мир – море, ты в нем – корабль»).

Особое внимание уделяется также трагической стороне любви, в частности, возможному роману поэта с царевной Анной Батонишвили, что нашло отражение в мотивах страдания («Багн блбулов лцвил э» / «Сад наполнился соловьями»), невозможности («Дун мэ такавур ис, йис мэ хехч дервиш» / «Ты – царь, я – бедный дервиш») и непреодолимой силы любви («Шат сирун ис» / «Очень красива ты»).

Էլիչկա Մելիքբեկյան – ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետ, ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ միջնադարյան գրականության տեքստերի վերլուծություն: Հայաստանում Եվրոպական Քոլեջ հիմնադրամի դասախոս, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոս: ellameliqbekyan1979@gmail.com

Эличка Меликбекян - ЕГУ факультет армянской филологии, соискательница кафедры истории армянской литературы и теории литературы им. академика Гранта Тамразяна факультета армянской филологии ЕГУ. *Научные интересы:* анализ текстов средневековой армянской литературы. *Место работы:* преподавательница в Фонде «Европейский колледж в Армении» и в Национальном аграрном университете Армении. ellameliqbekyan1979@gmail.com

Elichka Melikbekyan - PhD candidate at the Department of History of Armenian Literature and Literary Theory, named after Academician Hrant Tamrazyan faculty of Armenian philology YSU. *Research interests:* Analysis of medieval Armenian literary texts. *Current positions:* Lecturer at the European College Foundation in Armenia and the National Agrarian University of Armenian. ellameliqbekyan1979@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 09.05.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 27.05.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.